

ՅԵՍՈՒՆ ՏՆՐԻ ԸՌԱՋ

ՍՐԲՈՑ ԾԱԿՈՒԵԱՆՑ ՏԱՃԱՐԻ ՁԱՆԳԱԿԱՍԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆ

Ս. Յակոբեանց Մայր Տաճարի փայտաշէն անշուք զանգակատունը բոլորովին հինցած ըլլալով, Պէթօն-Արմէով ի նորոյ շինուեցաւ, յար և նման Ս. էջմիածնի զանգակատան կաթողիկէին:

Շինութեան ճարտարապետն էր Երսուտաղէմացի Մեծայարգ Տիար Մերկոյ Մերկերեան և հսկողը նոյնպէս Երսուտաղէմացի Մեծայարգ ճիար Գէորգ Սահակեան: Անոնք ամէն ջրանք նուիրեցին զանգակատան վայելուչ և ճաշակուոր կառուցումին համար, և շինութեան ամբողջ ծախքը իրենց հոգացին հաւատարմապէս, ի յիշատակ իրենց բարեպաշտօն գերդաստաններու ննջեցեալներուն:

Այս առթիւ, Ս. Աթոռոյս Գառ. Տեղապահ Գերշ. Տ. Մեսրոպ Սրբազանի կողմէ օրհնութեան և գահաձեռնութեան մէջ մէկ գիր ուղղուեցաւ վերայիշեալ բարեպետ և կկեղեցաւ որպէս յիշեցան:

(«Սիոն», 1931, Ե. Տարի, Մարտ,
(Թիւ 3, էջ 96):

Ս. ԿԻՐԱԿՈՍ ՄԱՆԿԱՆ ՄԱՍՈՒՆՔԸ

Վսեմ. Արմենակ Պէյ կամսարական Աղեքսանդրիոյ մէջ պատահական վաճառող մը գնած ըլլալով Ալի մը մէջ ամփոփուած մանուկ Ս. Կիրակոսի մասունքը, Եղիպտոսի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. ի (Դուշակեան, հետագային Գառիարաք Ս. Աթոռոյս, Ե. Ս.) խնդրաւ նոյն վրայ, նուիրեց Ս. Յակոբեանց Տաճարին:

Տ. Թորգոմ Արքեպս. ի այս առթիւ Գերշ. Գառ. Տեղապահ Սրբազանին ուղղած նամակէն քաղելով կու տանք Ալին նկարագրութիւնը:

«Ալին երկարութիւնն է իբր 30 սանթիմ, վերնամասը, այսինքն դաստակին վերի ծայրը ունի 14 սանթիմնոց շրջա-

նակ մը. որ կը վերջաւորուի 17 փերուք քարերով, ընդհուլուած ըստ մասին թեկնարի ապարանջանով մը, որ փակցուած է ազուցուած տեղին վրայ. նոյնպէսի ապարանջան մը փակցուած է նաև դաստակի վարի մասին վրայ, ընդհուլուած՝ միով պակաս 14 նոյնպէսի քարերով: Վերի ապարանջանին ներքեւ, երեք կարգ երկաթագիր տառերով փորագրուած է առ յիշատակարանը. ՍՐ. ԱԶՍ ՆՈՐՈՒԵ-ՑԱԻ ԶԵՌԱՄԲ ՄԵԼՔԻՍԵՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՅԻՇԱՏԱԿ ՄԵՈՒ ՍՐ. ՈՎԱՆԵՍԱՎ ՎԱՆԻՑՆ ՈՐ Է ԲԱԶՈՒԿ ՏՂԱՑ ՄԱՆՈՒԿ ՍՐ. ԿԻՐԱ-ԿՈՍԱ. ԹՎԻՆ ՌՄԳ (1754) ԱՄԻՆ: Իսկ ամենէն վարի ծայրը փակուած է զմբէթաձև և պտուտակաւոր կափարիչով մը, որուն կողքոյն օղով մը հաստատուած է: Դաստակին վարի կէտին վրայ, ճակատի կողմը, կայ չեխն իւր բանուած Ս. Կայս մը, որ գիրկն ունի Յիսուս Մանուկը, և նստած է երկսիւն խաչածայր խորանի մը ներքեւ: Նիւթն է արծաթ ոսկիջրած, արուեստն է սոսե կլիգել: Դաստակին ափի կողմը քիչ մը ճմլուած կ'երևի:

Գերշ. Գառ. Տեղապահ Սրբազանը այս նուիրական ընծայարկութեան առթիւ օրհնութեան և շնորհակտութեան գիր մը ուղղեց Վսեմ. Արմենակ Պէյ կամսարականի:

ՔԵՄԱՆԶԻՍ ՌՈՒԲԵՆ

Երսուտաղէմ ալ բախտն ունեցաւ վայելելու Քէմանչիսա Ռուբէնի Էմմանչիին գիրքանքը:

Հանրային նուագահանդէսէն ետք, զոր տուաւ քաղաքիս մէջ, ուր մեծապէս գնահատուեցաւ ըլլալ Հրէական ըլլալ Արարական շրջանակներէ՝ ընդունելով անկեղծ և խանդավառ գնահատանքեր տեղական թերթերու մէջ, Պր. Ռուբէն մեծ հաճոյք պատճառեց նաև Սուրբ Աթոռոյս Միաբանութեան և զպրօցներու աշակերտութեան համար ալ զսա նուագահանդէս մը տալով Ժողովուրդային Վարժարանի սրահին մէջ, Բշ. 16 Մարտի երեկոյեան:

(«Սիոն», 1931, Ե. Տարի, Ապրիլ,
(Թիւ 4, էջ 135-136):

«ՍԻՈՆ»-ի ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պր. Վ. Գ., վանքարանակ, կը հարցնէ.
«Գրիտենք թէ Կաթողիկ եկեղեցւոյ
գլուխը կը գտնուի Հռոմէոյ Սրբազան
Քահանայապետը, իսկ Հայոց. եկեղեցւոյ
գերագոյն պետն է Մայր Աթոռ Ս Էջ-
միածնի Գահակալը: Կ. Պալատը Յունաց
Տիեզերական Պատրիարքն ալ ունի՞ նոյն
գիրքը Օրթոտոքս եկեղեցւոյ մէջ»:

Նուիրապետական կարգն ու վարչա-
կան դրութիւնը մի քիչ տարբեր է Օր-
թոտոքս եկեղեցւոյ մէջ: Տիեզերական
Պատրիարքը կը վայելէ առեւտրական գե-
րազանութիւն մը միայն, նկատուելով
գառալիին ի հաւասարաւ, առանց իրաւա-
տութիւն ունենալու իր թեմէն դուրս,
այլ Պատրիարքութեանց ենթակայ թեմե-
րու գործերուն միջամուխ ըլլալու: Յի-
շենք այստեղ թէ Յ Պատրիարքութիւններ
ունի ներկայիս Օրթոտոքս եկեղեցին, Ե-
րոսնցմէ չորսը ուղղակի Յունական են, կը
գտնուին Մերձասոր Արեւելքի շրջանակին
մէջ և պատմական Աթոռներ են: Անոնք
են, իրենց հաստատման կարգով, Պոլսոյ
Աթոռնէն ետք, Անտիօքի (ներկայիս՝ Պէյ-
րուս), Ալեքսանդրիոյ (ներկայիս՝ Գահ-
հրէ) և Երուսաղէմի Աթոռները: Վեր-
ջինս հաստատուած է 451ին, Քաղկեդոնի
Ժողովի գումարման տարին, երբ պառակ-
տում և հերձուած յառաջ եկած է Քրիս-
տոսի Մի և Ընդհանրական եկեղեցւոյ մէջ:
Կարծէ յիշել թէ երուսաղէմի առաջին

Հայ Պատրիարք իբրեւ կը յիշուի Աբրա-
համ անուն մէկը, 638 թուականին, որ է
ըսել Սուրբ Բաղդաթին Արար-Իսլամական
գրաւումէն տարի մը ետք, մինչև Հա-
տինաց Երեսուղէմի Պատրիարքութիւնը
հաստատուած է 1843ին միայն, և անկէ
առաջ ու մինչև այսօր Սրբաեկեղեց հըս-
կողութեան ու պահպանութեան պատճառ
վատաւում է Ֆրանչիսկեան Միաբանու-
թեան, գլուխը անհնչուով կրկնաթաղ, որ
վարդապետի աստիճան ունի միայն և կը
նշանակուի Ս. Պապէն (ճիշդ ինչպէս ի-
րենց Պատրիարքը, մինչև Յունաց և Հա-
յոց Պատրիարքները կ'ընտրուին պատկան
Միաբանութեան կողմէ և դահ կը ըստըմա-
նաւ տեղական իշխանութենէն ճանաչման
հրովարտողը ընդունելէ ետք) Յ տարւած
պաշտօնավարութեան չրջանի մը համար:

Օրթոտոքս եկեղեցւոյ չորս միւս
Պատրիարքութիւնները հաստատուած են
աւելի ուշ ժամանակներու մէջ և կը ներ-
կայացնեն կրօնական քարձաքոյն իշխա-
նութիւնը Յունադաւան Սլու ժողովուրդ-
ներու: Այսպէս, գոյութիւն ունին Ռու-
սիոյ, Ռումանիոյ, Պուլկարիոյ և Եոզե-
ֆուլիոյ Պատրիարքութիւնները, իւրա-
քանչիւրը հաստատուած տուեալ երկր-
ներու մայրաքաղաքին մէջ — Մոսկուա,
Պուլքէշ, Սօֆիա, Պէլկարա: Կայ նաև,
ասոնցմէ դատ, Վրաց Պատրիարքութիւ-
նը, որուն Աթոռակալը կը կրէ «Պատ-
րիարք-Կաթողիկոս»ի տիտղոս:

Հետաքրքրական է դիտել տալ որ
Յունաստանի մայր հողին վրայ գոյու-
թիւն չունի Պատրիարքական Աթոռ, և
Օրթոտոքս եկեղեցւոյ անուանական Պե-
տին կայքը կը մնայ տակաւին Բիւզանդա-
կոն կայսրութեան երբեմնի մայրաքա-
ղաքը, հակառակ աւելի քան հինգ դարե-
րուն, որոնք անցած են յիշեալ կայսրու-
թեան փլուզումէն առդին:

Անգլիացի մեծանուն գրագէտ Զօրճ
Պէրնարտ Շօ, 13 Մարտ Ուրբաթ երեկո-
յին Վանքս այցելեց անակնկալօրէն, Սըր
Ռօնալտ Սթօրսի յանձնարարականով: Աշ-
խարհառէակ հիւրը կարճատե միջոցի մը
համար միայն երուսաղէմ եկած էր: Հա-
կառակ ժամանակի անյարժարութեան և
այցելութեան յանկարծութեան՝ Պր. Շօ
Պատրիարքարանի դահլիճին մէջ ընդուն-
ուեցաւ պատշաճ մեծարանքով:

(Նոյն տեղ, էջ 137):

